

Եւ անոնց հետ միտի ամբողջ հասն արբշիւս
 Աւրախաբիթ եղևութեան բոբբ բուրուսով
 կը սողոսկէ հոգւոյ մէջ:
 Բայց ես վստահ խիզախօրէն կը քալեմ,
 Թէ՛ն մարմնոյս խայթող փուշերն քամեն
 Արփուն ամբողջ շիթ առ շիթ,
 Որ ստքերուս կըրուկններէն զազարթոր,
 Կը կաթկըթի՛ թրմելու հոգն աղտելի,
 Ուսկից մարդը կտգմուեցաւ.
 Ու հեռուէն խաւարին մէջ վերելքիտ
 Չանձրոյթի բուն կ'ոռնայ անկուշտ իր յանկներգն:
 Բայց ես վստահ կը քալեմ,
 Կը կաթկըթի՛ թրմելու հոգն աղտելի,
 Ուսկից մարդը կտգմուեցաւ.
 Ու կը վտարեմ ձեռքերէս,
 Նայուածքներէս կը վանեմ,
 Ինչ որ մնացած էր աշխարհի կղզիաձեղն,
 Որպէս գի շինջ, որպէս գի սուրբ քայտըրիմ.
 Գիտեմ Աստուած կատարին վրայ այս լեբան
 Իր փառքն անեղծ պիտ ձօնէ
 Իմ մարդկային տեսութեանս:
 Ահա հուսկ դարձն.
 Ուսկից անդին աստուածութեան բիբն անմեռ,
 Պիտի բանայ անկերական լոյսի օրն
 Յաւերժական փառքի մէջ:
 Կըթոս ծունկերս թէն ցաւէն կոտորին,
 Թէ՛ն մարմինս նօթի, ծարաւ տըւայտի,
 Բայց աւստիկ յետին դարձն,
 Բոլոր թափովս կը խիզախեմ խոյանալ
 Շենդն անգրին՝ ուր լոյսն, ուր փառքն, ուր
 [կեանքն է: —
 Հոտ ալ սակայն գիշեր մ'անհուն կը տիրէ.
 Անծայրածիր այդ խաւարին մէջ դըժխեմ
 Սեւ խաչ մը լոկ կը զըտնեմ:

Ս. Մ.

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՎՈՒԹԻՒՆ

ՀՈՂԻ ՈՒ ՄԱՐՄԻՆ

Հոգի ու մարմինն անու՛մ են բասն,
 Մարմինն ասաւ. զամ աշխարհ լաւ կելնի.
 Մտումս կայ, խանեմ ամէն հաւաստն,
 Ես ունենամ խունարնն, լաւ կելնի:
 Հոգին մարմնոյն ասաւ. թէ՛ զաս իմ խտուր,
 Բռնե՛ք Աստուծոյ ճանապարհն լաւ կելնի.
 Չեռ վեր առ աշխարհի մեղաց թարգը տուր,
 Գնանք աղօթք անե՛ք սարն, լաւ կելնի:
 Մարմինն հոգուն ասաւ. լաւ կելնի ունենալն,
 Չես իբար թ'նչ քաղցր ա աշխարհոս մալն.

Մաս զամ, գտնեմ իմ ուղեցած զօգալն,
 Արնեմ գեղեցիկ կին, Էսարն լաւ կելնի:
 Հոգին մարմնուն ասաւ. մի խնդար մալով,
 Արի եկեղեցին դու մեղայ տալով.
 Կանգրիբ աղօթք արա, ծուշեր դիր լալով,
 Գնանք ընդէմ օտրբ տաճարն, լաւ կելնի:
 Մարմինն հոգուն ասաւ. ինչ զարուր ա լամ,
 Զարդարեմ մէջլիսն տնեմ ազուդամ.
 Երպի տամ, ծիծաղեմ, քէֆ անեմ, խնդամ,
 Խօջ հանք կենայ, իմ մուշարն լաւ կելնի:
 Հոգին մարմնուն ասաւ. մեք ա ծիծաղն,
 Էս օր անց կ'կենայ, մտածիր վաղն.
 Դատաստան կ'նստի Տէրն էնչաղն,
 Գնանք կանգրե՛ք բարաբարն լաւ կելնի:
 Մարմինն հոգուն ասաւ. կ'չինեմ սարայ,
 Արծաթէ՛ դուռ բանտամ, սոկէ փանչարայ.
 Օրչաուր կ'բարձրանեմ ես վարայ-վարայ,
 Պահեմ դուլն ու շատ նօքարն լաւ կելնի:
 Հոգին մարմնուն ասաւ. վեր, գնանք լեռն,
 Բալքի թեթեւանայ մեր ծանդր բեռն.
 Մեզ լզձե՛ք շար սատանի ձեռն,
 Ունենանք մեր ըխտիարն լաւ կելնի:
 Մարմինն հոգուն ասաւ. կ'նչեմ իշխան,
 Բարաբար կ'կանգրեն հարիւր, հազար շան.
 Ամէն քաղցրի մէջ տասն երկու միջդան,
 Շինեմ դուքան, բազարն լաւ կելնի:
 Հոգին մարմնուն ասաւ. քանի կան գրք իշխանն,
 Որ իշխան դարձան մտան էն գերեզմանն.
 Տես ինչ ա թարգմանումս սուրբ Աւետարանն,
 Թէ՛ իմանանք էն ֆօֆթարն լաւ կելնի:
 Մարմինն հոգուն ասաւ. կ'ղնեմ շղայ,
 Զառ ու զառքաք կ'հագնեմ վերէս շողողայ.
 Օվլադս շատ ան աղջիկ ու տղայ,
 Ով որ ունի հաւատալն լաւ կելնի:
 Հոգին մարմնուն ասաւ. գնա էյ յիմար,
 Գործքք բարի պախիր, էն ա քեզ խմար.
 Ոչ մալ պէտք կ'գայ, ո՛չ մին հաւազար,
 Էսօր անե՛ք մեք մեր ճարն, լաւ կելնի:
 Մարմինն հոգուն ասաւ. ման կուզամ աշխարհ,
 Կիտեմ շատ խաղիւնայ, շատ էլ անգրն քար.
 Առնելու, ծախելու զլիտուր ճարտար,
 Ելնեմ սմտար ու դօզմաթղար լաւ կելնի:
 Հոգին մարմնուն ասաւ. կ'փնչն Գարբիէլեան փողն,
 Շատ երանի կըլնի էն ձէն տուողն.
 Արդարն կելնի աշայդաթի կանֆուղն,
 Թէ՛ ընկանե՛ք էն դաթարն լաւ կելնի:

Մարմինն հոգուն ասաւ. կանամ ազօթք կանեմ,
 Թափուեմ իմ միջոցին քունը կենդան եմ.
 Ինչ գործ որ դու գործես քեզ միաբանեմ,
 Դառնամ դար քեզ, որ արդարանալն լաւ կելնի:

Ղուլ Յովհաննէս ինչ կտանես աշխարհից,
 Ղւշիբդ հոգու, մարմնու գառն գէրդարից-
 Մին օր կ'ըստանուեն, կ'ենն իրարից,
 Վերջանայ, մեր միդաց դասն լաւ կելնի:

ԵՐԿԻՆՔ ԱՆ ՔԵՏԻՆՔ

Երկինքն ու գետինն եկան բաւ արին:
 Գետինն ասաւ. տես ինչ անդատտես ունեմ,
 Աճնայն ծաղկուեցով լի և զարդարած,
 Կանաչ վարդ ու լալայ բուրաստան ունեմ:

Երկինքն ասաւ. թէ շոս խարթ իմացիր,
 Տես ինչպէս օրինաց լաւ սանձան ունեմ:
 Աստուածային աթոռն շուտով զարդարած,
 Տէրն ինքն բազմած ա, մեծ իշխան ունեմ:

Գետինն ասաւ. Աքամ նահաւայրն մեր,
 Դրա պէս ով ունես, գնա թայն բեր.
 Քանի՜ ճգնաւորներ կամ սրբակամներ,
 Քանի՜ սրբոց մատուց գերբզման ունեմ:

Երկինքն ասաւ. իմ ստեղծող թագաւորն,
 Կտայ իմաստութիւն, ամէն շնորհն.
 Սերովբէք, քերովբէք վեց թեւաւորն,
 Ես էլ կրեշտակաց բեապարան ունեմ:

Գետինն ասաւ. ունեմ ճշմարիտ հաւատ,
 Մարգարէք, առաքեալք, հայրապետներ շուտ.
 Քանի՜ եկեղեցիք, վանք և անպապտ,
 Քոսի՜ տեղ սանձանեմ սուրբ սեղան ունեմ:

Երկինքն ասաւ. ունեմ լուսին, արեգակն,
 Քանի՜ բեւեռ, աստղուք, քանի՜ արօտեսակն.
 Տասներկու կենցաղեք, եօթն մուրթակ,
 Տնտնու՞մ ես քանութիւ խաչ նշան ունեմ:

Գետինն ասաւ. ես եմ մի զարդարած տուն,
 Միշտ կերակրվում եմ թաշուք, անասուն.
 Արուեստաւոր մարդիկք շնորհօք իմաստուն,
 Քանի՜ վարպետ բժիշկ. լօղման ունեմ:

Երկինք ասաւ. վերին դու ի՞նչ կ'չանես,
 Աչդ իմ ձեռնուեմ ա, էլ ինձ կ'նայես.
 Մարդ ես, էդ մարդիկն անձա՞ կ'պահես,
 Եղիտ ու յնույ՞ք ես կ'նդան ունեմ:

Գետինն ասաւ. եկ տես ծաղկուեք ծառերս,
 Թագայ չայիրներս, բաղայ-բաղերս.
 Դաշար աղբիւրներս, բարձր սարերս,
 Որչափ շեանգալ, բիշայ, գիւլթխան ունեմ:

Երկինքն ասաւ. վերէդ կարկուտ կ'բերեմ,
 Լուքամ անեմ՝ ամպերին չոք կողմը տիրեմ.
 Կեծակիկ տամ, արք ու քարերք կ'կրեմ,
 Շինեմ հողդ մոխր հուրահաս ունեմ:

Գետինն ասաւ. եղար դու իմ թշնամին,
 Փշմ հողմն հարաւայ, փախչես էն դամին,
 Լեւնէջ գցեմ սաստիկ հառ ելած քամին
 Ես էլ քանց քեզի մեծ փառլեվան ունեմ:

Երկինքն ասաւ. գնա՛ յիմար ու ոմմար,
 Որչափ որ գորեղ աս, կտանեմ էջ հողիդ.
 Դու իմ ստեստակն աս, կանգնած ամ գլխիդ,
 Եօթն տակ ամալաթ բարձր այվան ունեմ:

Գետինն ասաւ. ունեմ՝ քանի կերպ մաղան,
 Ոսկի, արծաթ, շուսհիբ, շլմազ, մարճան.
 Կելզգկիբդ դատարար, չարթաթ ու դիւան,
 Թագաւոր և իշխան, խան, սուլթան ունեմ:

Երկինքն ասաւ. կ'ծագեմ լուսեղէն շողքն,
 Ինդան, ուրախանան թամամ տեսողքն.
 Կրախտն ի՞նչ ա, քոնն ու դժոխքն,
 Արդարք ժողովմ՝ օթեւան ունեմ:

Գետինն ասաւ. դար բաւ կանես իմ հետն,
 Որ ինձնու՞մ ա թաղած Նոյ նահապետն,
 Ավկիանոս, ծոթն, Յորդանան գետն,
 Գրիտոս մկրտեցաւ աւազան ունեմ:

Երկինքն ասաւ. կարան ինձի ուրմնաս,
 Չտամ բարի ցօղի դու կ'վիրանաս.
 Յամաքի ծովէրդ, գետով կ'չորանաս,
 Որ շասես ծաղկով լի բուրապտան ունեմ:

Գետինն ասաւ, ունեմ շատ բարբիբ տեղ,
 Անպզին քաղաքեք, համ քաղաք, համ գեղ-
 վերէս կանանչում ա ամէն ցաւի դեղ,
 Էիւանդք առողջանան, եօ դարման ունեմ:

Երկինքն ասաւ. ժամանակ կայ քեզ գալու,
 Դու պէտք ու վերջանաս, ես ա՞մ մտալու.
 Է՞ս օրն ինչ ունես պատասխան տալու,
 Մեղաւորաց կամար կար զնդան ունեմ:

Գետինն ասաւ. կ'մաքուրի իմ հողն,
 Չայն յերկից՝ կիշանէ քարբիւրեան փողն.
 Զլմարիտ թագաւոր մեր ստեղծողն,
 Կ'բազմի ինձ վերայ, գառաստան ունեմ:

Մեղապարտ Ղուլ Յովհաննէս, մեղայ տուր արի,
 Մարմնով աշխատեցիր մեքն աշխարհի.
 Քննող դատաւոր կամրդ ա բարի,
 Փրկող և ազատող Քեզ միայն ունեմ:

ՂՈՒԼ ՅՈՎՀԱՆՆԵՍ